

ՆՎԻՐՎՈՒՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄԱՐՄԱՆԻ  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄՅԱԿԻՆ

ՊԵՏՐՈՍ ՇՈՎՃԱՆԻՍՅԱՆ  
Պալուական գիրությունների թեկնածու, դոցենտ

## ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒՉՅԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐՄԱՆՈՒՄ

Գևորգյան ճեմարանի փառքը կերպող դասախոսներից է եղել ականավոր պարմարան Հակոբ Համազասպի Մանանյանը (1873-1952):



Հ. Մանանյանը ստացել է փայլուն կրթություն<sup>1</sup>: Նա գերազանցությամբ ավարտել է Թիֆլիսի ռուսական I դասական գիմնազիան (1893): Բարձրագույն կրթությունը ստացել է Ենայի (Գերմանիա) համալսարանում՝ սովորել է փիլիսոփայության ֆակուլտետում (1893 - 1897 թ.): Միաժամանակ հետևել է Լայպշիցի ու Ստրասբուրգի համալսարանների արևելագիտական ու լեզվաբանական դասընթացներին: 1897 թ. ամռանը պաշտպանում է «Beiträge zur Albanischen Geschichte» խորագիրը կրող արենախոսությունը, որի համար նրան շնորհվում է փիլիսոփայական գիրությունների դոկտորի ասթիճան:

1898 թ. պարսից բանասիրությունից, լեզվից և պարմությունից եքսպերտ քննություններ է հանձնում U. Պետերբուրգի կայսերական համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում և սրանում հայ-պարսկական բանասիրության թեկնածուի առաջին կարգի դիպլոմ:

Հ. Մանանյանի ուսումնառությունը Ենայի, Լայպշիցի, Ստրասբուրգի և U. Պետերբուրգի համալսարաններում հնարավոր եղավ իրականացնել Ալ. Մանթաշյանի նշանակած թոշակով: Ինչպես բոլոր թօշակառուները, այնպես էլ Մանանյանը հանձնառություն ունեին ուսումնա պարտելուց հետո հետք վերադառնալ Կովկաս և իրենց նվիրել հայ դպրոցին ու մշակույթին: Իր մեծ քարերարին դրա խոսքմանը հավաքարիմ Մանանյանը ընդունում է Գևորգյան ճեմարանի դեսչության հրավերը և դեղափոխվում Էջմիածին:

<sup>1</sup> Հ. Մանանյանի կենսագրության մանրամասները գրեն L. Հ. Քարայան, Վ. Ա. Հակոբյան, Հակոբ Մանանյան, Երևան, 1974: Պ. Հ. Հովհաննեսիսյան, Հակոբ Մանանյան, Երևան, 1981:



«Մանանյանը Էջմիածին է գալիս 1899 թ. վերջերին: Այդ մասին «Արարար» ամսագրում փառագրվում է հակիրք հաղորդագրություն. «1899 թ. դեկտեմբերի վերջերին Մայր Աթոռ ժամանեց ձևադրանի լարանական բաժնի հունարենի ուսուցիչ պր. Ն Մանանյանը, որն իր ուսումն ավարտել է արդասահինանում և կրկին թնդություն է դվել Ռուսականուում: Պարուն դրուերից (Շննդյան - ՞Շ. Ն) հետո սկսել է արդին իր դասերը»<sup>2</sup>: Բացի լարանական բաժնի երեք դասարաններից, Մանանյանը իին հունարեն է դասավանդում նաև դասարանական և իին փիլիսոփայության պարմություն՝ լարանական բաժններում<sup>3</sup>: «Եփազայում լարանական բաժնում դասավանդել է նաև իին հունական գրականության պարմություն, արևմտաեվրոպական գրականության պարմություն, զերմաններեն»<sup>4</sup>:

«Մանանյանը Գևորգյան ճեմարանում դասավանդեց ուղիղ իինգուկես դարի՝ 1900 թ. հունվարից մինչև 1905 թ. հունիս: Շնորհիվ իր մեղմ ու բարի բնավորության, լայն գիտական պարասպության՝ Մանանյանը կարողացավ շատ արագ ձեռք բերել ճեմարանի դասախոսության սերն ու հարգանքը, առինքնել ուսանողությանը: Նրա ճեմարանական առաջին սաներից Ս. Վրացյանը ջերմորեն ու պարկառանքով է հիշում հունարենի և փիլիսոփայության պարմության իր ուսուցչին. «բարձրահասակ, բարեկազմ, համակրեսի դեմքով, միշտ կոճկած ու լուրջ»: Թեև նա մարդամովք չէր, բայց «հիսնապի ուսուցիչ էր»<sup>5</sup>:

«Մանանյանը ցանկացած առիթ բաց չէր թողնում սաների մեջ սեր ներարկելու հայրենի երկրի անցյալի պարմության նկարմամբ, դասփիլարակել նրանց որպես ճշմարիք հայրենասեր քաղաքացիների՝ միշտ շեշտելով ճեմարանի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ներկա իմացական կյանքում: Ս. Վրացյանը, որ մի գոյնական ճաշկերույթի ատիթով ներկա է եղել Մանանյանի հանդիպմանը սաների հետ, հիշում է նրա ճառը ուղղված ճեմարանականներին. «Մեր ազգը տգենի է, մեր ազգը ճնշված է, մեր ազգը թշվառ է: Ճեմարանականներ, դուք պետք է պատրաստվեք անդրելու ազգի ցավը: Ազգի հույսն եք դուք»: Այսուհետեւ Վրացյանն ավելացնում է. «Մեր սրբից էր խոտում Մանանյանը, որովհետու մնանք էլ համարում էինք մեզ ազգի հույսը»<sup>6</sup>:

<sup>2</sup> «Արարար» ամսագիր, 1900, № 1, լ. 22: Աշշուշիք, սխավում լ. Ա. Սիմոնյանը, նրբ գրում լ., թև Ն. Մանանյանը և Ս. Տիգրանյանը 1895 թ. հոկտեմբերին միասնամանակ նկան ճնմարտան ուսուցավախության (գլւն Ա. Սիմոնյան, Սիրական Տիգրանյանի և իր ըսկերների հիշարակին, «Հայրենիք» ամսագիր, Բոսպոր, 1947, № 2, էջ 87, 91; № 4, լ. 97-98):

<sup>3</sup> Ս. Զքյան, Էջմիածին ճեմարանը, «Պայքար» դարեգիրը, Բոսպոր, 1955, լ. 198-200:

<sup>4</sup> Մաշփոցի անվ. Մագլենադարանի արխիվային բաժնի (այսուհետ՝ ՄԱՐ) Ն. Մանանյանի ֆունդում պահպանման գրականության պարմությանը նվիրված ճ. Մանանյանի ընդարձակ ճեռագիր աշխատությունը (գլւն ՄԱՐ, Ն. Մանանյանի ֆունկ, թղթ. 221, փակ. 8, թ. 1-300), որի մասին ընդհանուր գտափար կարելի է կազմել Մ. Նարյանի հրապարակման միջոցով, թևն «Բաերիք Հայաստանի արխիվների», 1972, № 3, լ. 117-128:

<sup>5</sup> Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հագ. Բ. Բևյուր, 1960, լ. 54:

<sup>6</sup> Անդ, լ. 55:

Դարվանշական է նաև Մանանյանի պաշտոնակիցներից Նր. Աճառյանի առաջին դպավորությունը՝ «Մանանյանը լավ լրիտագիրություն էր երեք եվրոպական լեզուների և ուսւերենի: Բարձրաձայն, լավ մրածված և գեղեցիկ առողանությանը ձաներ էր խոսում հայերեն և տաւուրեն: Ունենալով վայելու արդարությունը ձաները հասակ, շարերին սիրելի դարձավ: Մենք երեքս՝ Մանանյան, Տիգրամյան և Աճառյան, ոչ միայն իրքն ազարամիտ երիտասարդներ, այլև իրքն հայագիրության սիրահար ամենը, շար մորերին լնկերներ դարձանք: Մանանյանը պատմարան և բանասեր լինելով՝ ինձ ավելի մոդիկ էր»<sup>7</sup>: Բացի նշված դասախոսներից, Մանանյանը միերիմ էր նաև Մեծն Կոմիտասի, բանասփեղ Հովի. Հովհաննիսյանի, Գ. Տեր-Սկրբեյանի, Ս. Մանդինյանցի և այլոց հետո: Նրան չափազանց գնահարում և արժեվորում էր նաև Ամենայն Հայոց Հայրիկը՝ Սկրբիչ Ա Խորիմյանը: Շ. Մանանյանի կրթուեր եղբայր Ա. Մանանյանը հիշում է. «Խորիմյան Հայրիկը եղբոր շար էր սիրուն և միշտ, իր մոդ օգուարազգի ացելուներ գալու դեպքում, եղբոր կանցում էր իրքն թարգմանիչը»<sup>8</sup>:

Մանանյանը սիրով էր մասնակցում ճեմարանի կյանքին: Մանկավարժական ու գիտական աշխարհներից ազար ժամերին նա կազմակերպում էր զանազան միջոցառումներ, համերգներ, թափերական ներկայացումներ: Նրա ջանքերով է, որ ճեմարանում ըստեղծվում է թափերական խումբ, որը հասպարության մեծ դահլիճում ներկայացումներ էր դրախտ դասախոսների և ուսանողների համար: Դարձավես մեծ հաջողություն է ունեցել նրա բնմադրած Շնորիկ Իրսենի «Դոկտոր Շփոկման կամ Ժողովրդի թշնամի» դրաման, որը ցնոց դրավագորություն է թողել հանդիսաբեսի վրա<sup>9</sup>:

1902 թ. ամռանը Շ. Մանանյանն ու Կոմիտասը կազմակերպել են լսարանական բաժնի ուսանողների հիշարժան այցելությունը Անիի ավերակներ: Անիի Մայր Տաճարում Կոմիտասն իր երգչախմբի հետ կատարել է Պատարագի երգեցիկ մասի արարողությունը: Ենդապայում Մանանյանը խոսրովանել է, որ ինքը «եղել է թե՛ ուսուական կենդրուներում և թե՛ արդասահմանի մայրաքաղաքների օպերաներում, լսել է խոշորագույն ու առաջնակարգ երգիչների ու խմբերի համերգները, սակայն այդպիսի երգեցողություն, որ վիճակած է եղել իրեն լսել Անիի Մայր Տաճարում Կոմիտասի դիկայլարությամբ, ևս ոչ մի տեղ չի լսել»<sup>10</sup>:

1901-1903 թթ. Շ. Մանանյանը գերմանացի հայագետ, պրոֆ. Ֆ. Ֆինկի և Ե. Գյանջեցի յանի հետ միասին նախաձեռնում է Ա. Հովհաննիսյանի նյութական օժանդակությամբ Մարքուրգում լույս փեսնող «Հանդես հայագիրության» (գերմաներեն և հայերեն լեզուներով) գիտական պարբերականի հրաբարակումը և դառնում նրա խմբագիրներից մեկը<sup>11</sup>:

<sup>7</sup> Նր. Աճառյան, Կյանքիս հուշըրից, Երևան, 1967, լ. 215:

<sup>8</sup> Ա. Մանանյան, Ակադեմիկոս Հակոբ Մանանյանի մահվան հնգամյա դրախտիցի ատթիվ (հիշողություններ), գլուխ «Էջմիածնի» ամսագիր, 1957, № 2-3, լ. 67:

<sup>9</sup> Ա. Մանանյան, Նշվ. աշխ., լ. 67:

<sup>10</sup> Անտ., լ. 68:

<sup>11</sup> «Zeitschrift für Armenische Philologie» (այսուհետև՝ ZAPh). Հանդես գրական, պատմական, լոգվագիրական և ազգագրական, № 1, 1902; № 2, 1903:

1902 թ. Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նա նշանակվում է «Պատրմագիրը Հայոց» մատենաշարի հանձնախմբի անդամ:

Անշուշփ, Ռ. Մանանդյանի համար էջմիածնական փարիների ամենազեղեցիկ ու հիշարժան իրադարձությունը նրա ամսունությունն էր Ալ. Մանթաշյանի գարմուիի Վարվառա Խանամիրյանի հետ: Հարսանյաց հանդեսը գեղի ունեցավ ճեմարանի մեծ դահլիճում: Հարսանյաց արարողությանն իր ներկայությամբ պարվել է Հայոց Հայրապետը, որն օրինելի է նորապսակ զոյզին և մաղթել երջանիկ փարիների կյանք: Սեղանապետը Հովի. Թումանյանն էր<sup>12</sup>, իսկ երաժշգուական մասը ղեկավարում էր Կոմիտասը:

Հարսանիքին մասնակցում էին Էջմիածնի միաբանության անդամները, ճեմարանի դասախոսները, հյուրեր Երևանից, Թիֆլիսից, Բաքվից, Մոսկվայից, Պետերբուրգից, Վերսանդրապոլից, Վիալյշայից:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Սկրիփիչ Ա. Խորիմյանի 1902 թ. հունվարի 23-ի կողնակով Ռ. Մանանդյանը նշանակվում է «Արարագ» ամսագրի խմբագրապետ, բազմահմուր հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի օգնական՝ լծակից ունենալով ճեմարանի իր գործընկեր Ս. Տիգրանյանին: Ռ. Մանանդյանը սրբանձնում է ամսագրի հայագիրական բաժնի պարասխանագությունը: Նա մեծ սիրով ու պարզի գիրակցումով ձեռնամուխ եղավ «Արարագ»-ի բարի համբավը շարունակելու և նրա գիրական բովանդակությունն էլ ավելի ճոխացնելու գործին: Այդ շրջանում է, որ «Արարագ»-ի էջերում փալագրվում են Ն. Աղոնցի, Ա. Արենյանի, Մ. Արենյանի, Տր. Աճառյանի, Գր. Խալարյանցի, Կ. Տեր-Մկրտչյանի, Ռ. Թիգրայանի, Ն. Աղբայանի և այլոց բարձրարժեք ուսումնասիրությունները: Ամսագրի խմբագրական կազմի շանքերով այն հավակնում էր դատնալ լավագույն գիրական պարբերականը հայ իրականության մեջ:

Բնականաբար, Ռ. Մանանդյանն իր հերթին աշխատում էր ամսագրի էջերում հանդես գալ նաև սեփական գիրական պարբած հրապարակումներով: Այսինք են բապագրվում նրա՝ Էջմիածնի ծեռագրապահոցում կարտարած առաջին գիրական պարբառմերի արդյունք հանդիսացող ուսումնասիրություններն ու մի շարք մագիստրոսականներ: Միայն «Արարագ»-ի 1902 թ. հունվար-մարտյան համարներում փալագրվում են նրա ուր գրախոսականներ, որոնք վերաբերում են գիրության ու գրականության փարբեր խնդիրներին և իրավագած ուր գրքերի<sup>13</sup>: Այդ գրախոսություններից կցանկանայինք անդրադառնալ միայն մեկ-երկուսին, որոնք լավագույն ներկայացնում են երիտրասարդ միավորականի հավաքածքն ու նրա գիրական սկզբունքայնությունը, գրական մոդեցումներն ու ճաշակը:

Այդ փարիներին մեծ թիվ էին կազմում օպարալեզու գեղարվեստական երկերի հայերեն թարգմանությունները, որոնք արհեստականորեն հրամցվում էին հայ ընթերցող հասարա-

<sup>12</sup> Մանանդյանը Հովի. Թումանյանի հետ կապված էր ին և անկեղծ բարեկամությամբ: Թիֆլիսի գլուխի վեհափոխիչ վելուց հետո (1905 թ.) Մանանդյանը հաճախ էր լինում բանասփեղի բնակարանում և մասնակցում Վերնադիան միջոցառություններին: Հարկածական Լ. Ռ. Մանանդյանի կողմից ընծայագրված մի բանի գրքերի ատկայությունը Հովի. Թումանյանի գրադարանում: Դրանցից մեկը կրում է հենքայա մակագրությունը: «Մնացած բարեկամ Հովի. Թումանյանին Ռ. Մանանդյանից», Ս. Էջմիածնի, 1904, 4-Վ, (թիւն Ռ. Թումանյանի փուն-թանգարան, անձնական գրադարան):

<sup>13</sup> Տիւն «Արարագ», 1902, № 1, լ. 72-75, 75-77, 77-78; № 2, լ. 171-172; № 3-4, լ. 335-342, 345-347:

կայսությանը: Գաղտնիք չէր, որ այդ թարգմանությունների մի զգալի մասը որևէ գեղարվեստական ու դաստիարակչական արժեք չէր ներկայացնում: Այս վիճակից անհանգստացած Շ. Մանանյանը փորձում է «Արարագ»-ի միջոցով կողմնորոշել ոչ միայն ընթերցողներին, այլև թարգմանիչներին: Նարը կը ծագում ինչ գրքեր պետք է թարգմանել հայ ընթերցողի համար, մանավանդ մանուկ ընթերցողի: Սա կարևոր հարց էր և ոներ ազգային գաղափարախոսական նշանակություն: 1902 թ. լույս էր գրեսել անզիհացի վիպասանուի Մարիա Կորելիի «Մի մանկան հոգու պարզություն» սրբեջագործության հայերեն թարգմանությունը: Գրքին նվիրված գրախոսականում Շ. Մանանյանն ընթերցողներին պարզաբանում է, որ այն «մեղանչում է ամենամեծ գրական պահանջների առջև: Այս գրվածքում բացակայում է հոգիբանական ճշգրտությունը, կանքի նկարագրությունը անհամապատասխան է իրականությանը և հերոսների դեմքերը միանգամայն շինծու են: Մի խոսքով մի մանկան այս պատմությունը գրական-գեղարվեստական անշնորհք արդարություն է»<sup>14</sup>:

Գրախոսն ի վերջո առաջարկում է գրական-գեղարվեստական ոչ մի արժեք չունեցող նման գրքերի փոխարեն թարգմանել եվրոպական գրականության շաբ նշանավոր երկեր, որոնք գրակավին անձանող են հայ իրականությանը. «Եթե թարգմանիչն առանձին նպատակ ուներ՝ հայ ժողովրդին մարդանիշ անել քրիստոնեական վարդապետության վաւենությունը՝ նորք, արդարամիտ և խորը կերպով պատկերացրած նորագոյն գրական երկնորում ավելի նպատակահարմար կիներ թարգմանել արդի գրականության քրիստոնեական ողին և սկզբունքները կենդանի և իրական զծերով նկարագրող լավագոյն և հայրնի գրվածքներից մեկը. օրինակ՝ ՀՀ Տուսկոյ («Թարգմանված երկերից», Պիեր Լուի, Դ Զուտերման («Johannes»)<sup>15</sup>, Դ Բրանդ («Brandes») և այլոց: Այսպիսով հայ ընթերցող հասարակությունը մի նոր առիթ կունենար քրիստոնեության վեհությունը և սրբությունը նորորեն գիրակցելու և կիսականար ու կոսվորեն վեսպի անարդար գեներացիային հակառակ, որ «դրական փիլիսոփայության» և «հառաջադիմության» կողմնակից լինելով համերձ կարելի է միևնույն ժամանակ լինել անկեղծ քրիստոնյա»<sup>16</sup>:

Շ. Մանանյանը «Արարագ»-ի էջերում բարձրացնում է Էլ ավելի մրահողիչ մի այլ հարց: Լույս էր գրեսել ոռու պատրմաքան Ա. Անինսկու «Դայոց Եկեղեցու պարմությունը» (մինչև XIX դար) մենագրությունը<sup>17</sup>, որը թե՛ ուսումնասիրության եղանակի և թե՛ պատրմական նյութի և փաստերի ճշգրության փեսակերից որևէ աղեք չուներ գիրականության հետք. «Այս աշխագության մեջ, - պարզաբանում է Շ. Մանանյանը, բացակայում է բանասիրական և պատմագիրական ողին և ուղղությունը»<sup>18</sup>: Շ. Մանանյանն այլ առիթ ունեցել էր «Արարագ»-ի էջերում անդրադառնալու սույն պատրմաքանի մեկ որիշ աշ-

<sup>14</sup> «Արարագ», 1902, № 3-4, լ. 345:

<sup>15</sup> Խոսքը Նիման Զոհերմանի «Դոփիաննես Սկրիֆիչ» (1898) ողբերգության մասին է:

<sup>16</sup> «Արարագ», 1902, № 3-4, լ. 346-347:

<sup>17</sup> А. Аптиковский, История Армянской церкви (до XIX века), Киприан, 1900, XI+306+VI стр.

<sup>18</sup> «Արարագ», 1902, № 3-4, լ. 336:

խարության<sup>19</sup> հականայկական միքումներին և վերհանել դրանք<sup>20</sup>: Այժմ՝ այս նոր գրքում Անինսկին Էլ ավելի անզուսայ և անարդար հարձակումներ էր կապարում Հայոց Եկեղեցու և նրա հայրերի նկատմամբ: Ետինակի համար Հայոց Եկեղեցին և հայ ժողովուրդը Քաղկեդոնի ժողովից հետո դարձել են «հերոսիկուներ և աղանդավորներ, կույր, ֆանատիկու, տիգեր, ամրարդավական, խավարամիր և այլն: Շովիան Օձնեցին ֆանատիկու է, որովհետև մրածուն է հերոսիկուի նման»:

Անինսկին հերթողականորեն ո ծրագրավորված հայ հոգևորականությանն ու ընդհանրապես ամբողջ Հայստանյաց Եկեղեցին Վարարանում և սև զոյներով է ներկայացնում: «Տայ ժողովրդի մնածանաւությունն այսօր,- զայրացած պարզաբանում է հեղինակը,- ասդրվածարանության նշրությունները չհասկանալով՝ կուրորտն պաշտուն է իր պատերի հակառակը»<sup>21</sup>:

Պարմական երևոյթների նման կանխակալ ու միքումնավոր մեկնաբանությունը յուրաքանչյուր լրջամիտ ուսումնասիրողի համար անընդունելի է: Անա թե ինչու Մանանդյանը քայլ առ քայլ մարմանշում է, որ հեղինակի ուսումնասիրության եղանակը ոչ զիգական է և ոչ է անաչառ, որ այն «միշտունավոր ուղղությամբ կազմված և մնած մասամբ՝ սիամ ու թերի պատմագորական փաստերի վրա հիմնված մի երկ է, և մի ապացուց է, որ արտավիզմը (հերքասերում, հեռավոր նախնիներին բնորոշ հարկանիշների դրսուրում - Պ.Ճ.) զոյտություն ունի նաև զիրական գրականության մեջ»: Մանանդյանը համոզված է, որ ապագա անսահար ուսումնասիրությունները, «զիրական արդարամրությունը և ճշնարարասիրությունը, խղճի ազարության և կրոնական հանդուժմականության լուսավոր լայն ակզրունքները հաղթելու են և կիայթեն Անինսկիների այս խավար սկզբունքները և հասկացողությունները, որոնք հուզունուր են անաշառության և զիրական արդարամրության: C'est une grande folie de vouloir Utre sage tout seul՝ մնած անմրություն է, եթե մարդ կարծում է, թե միայն ինքն է իմաստուն»<sup>22</sup>:

Նոյն միքահոգությամբ է առեցուն Շ. Մանանդյանի մեկ այլ գրախոսությունը, որ վերաբերում էր հայրնի հասարակական գործիք Գ. Մելիք-Կարազյանի աշխարությանը<sup>23</sup>: Գիրքը նվիրված էր Արևմբյան Հայաստանում գործող գերմանական վարքեր մարդասիրական ընկերությունների գործունեությանը: Գրախոսի կարծիքով, խոսքն Արևմբյան Հայաստանում զգուշությամբ ու նրբորեն տարվող ավելաբանչական քարոզչության մասին է: Իրենք՝ զերմանական քարոզիչները չեն թաքցնում, որ հայերի շրջանում ավելաբանչական քարոզության շնորհիվ ցանկանում են «զարթուցնել հայ լուսավորչական Եկեղեցն, որ խեղովել է արդարի ծեսերի մեջ»:

Գրախոսության միջոցով Մանանդյանն ահազանգում էր հայ հասարակությանը, որ գերմանական ընկերությունները հայ որբերին կրթում են բողոքական Եկեղեցու ոգով և

<sup>19</sup> А. Аппинский, Древние армянские историки, как исторические источники, Одесса, 1899, 133 стр.

<sup>20</sup> «Արարագ», 1900, № 2, լ. 85-86:

<sup>21</sup> А. Аппинский, История армянского народа, стр. 137.

<sup>22</sup> «Արարագ», 1902, № 3-4, լ. 342:

<sup>23</sup> Մելիք-Կարազյան, Գերմանական օգնության ընկերությունները Տաճկա-Հայաստանի համար, Թիֆլիս, 1901, 77 լ.:

նպարակ ունեն մեր ազգային Եկեղեցին «վերանորոգել» ավերարանականության սկզբունքների հիման վրա: Նրա եզրակացությունը միանշանակ է անշուշտ: Գերմանիայում կան շատ բարեսիրու անհապներ և խկական մարդասիրական ընկերություններ, որ անշահամնդրորեն օգնում են հայ որբերին, մեր ժողովուրդը երափառապարփ է գերմանացիներին այն բանի համար, որ նրանք հազարավոր որբեր և դատավյալներ ազարեցին մահվան ճանկերից: Խսկ ինչ վերաբերում է «Գերմանական օգնության ընկերությանը», ապա նրանից պետք է անմիջապես վերցնել որբերի հոգնոր կրթության գործը և հանձնել Հայ Եկեղեցու հոգևորականներին:

Մանանյանը պարզորոշ ցույց է տալիս, որ գերմանական բոլոր ընկերություններն են Արևմբյան Հայասդրանում գործում են ի նախակը Գերմանիայի քաղաքական և գննիքնական շահերի, իսկ մարդասիրական, քրիստոնեական քարոզները շղարշ են, նրանց խկական էությունը թաքցնելու միջոց: Ինչ վերաբերում է Արևմբյան Հայասդրանում Գերմանիայի քաղաքական շահերի հեռանկարներին, Ն. Մանանյանը պարզաբանում է. «Տաճկահայերը թե՛ գերմանական քաղաքականությունից և թե՛ որոշ հայ գործիքների հակուններից դեպի եկորսական այս կամ այն պետությունը, միմիայն վնասներ են դեռևս: Տաճկասդրանի հայաբնակ նահանգների վերաբերմամբ վերջին և ազդեցիկ խոսքը անպայման միշտ Ռուսաստանին է, որը նոյնիսկ յուր քաղաքական շահերի դեռակետից պետք է զորեղ կերպով պաշտպանի մեր թշվառ դաճկահայ եղայրների արդար դատը պանխականական այն վրանգավոր քաղաքականության դեմ, որի սրամիկ և խորամանկ նպատակն է Ռուսաստանի սահմանակից երկիրը լցնել կրոնամոլ, վայրագն և կարաղի պահակների խմբերով»: Ն. Մանանյանի եզրակացությունը միանշանակ է. «Տաճկահայապակ հայերի ողբայի որությունը թեթևացնելու համար ամենամեծ արժեքը կունենա Ռուսաստանի բարեկանությունը և պաշտպանությունը»<sup>24</sup>:

Ն. Մանանյանի այս շրջանում «Արարավ»-ում պայազրված գրվածքներից առանձնանում է: «Մի դիրողություն հայոց ներքին կյանքի ուսումնասիրության վրա» չափազանց ուշագրավ հոդվածը<sup>25</sup>:

Այսինքն հայագետը հանգում է այն ճիշտ հետևողյան, որ հասարակության պարմական զարգացման վրա մեծ ներգործություն ունի դպյալ ժամանակաշրջանի «արիեւստագործության և արդյունագործության աստիճանը»: Ելնելով դրանից՝ նա առաջարկում էր «լուրջ քննական վերաբերմունք դեպի հայ ժողովոյի ներքին կյանքը...: Այլուր հայոց պարմությունը կմնա միշտ արդարաքին անցընդի պարտագրական ժողովածու, քանի որ այդ քննակավառի վերաբերյալ մինչև այժմ պակասում են զիրական լուրջ ուսումնասիրություններ»: Այսինքն Մանանյանը ժխտում է որոշ պարմարանների այն գիտականը, թե իբր հայկական պետականությունը կործանվեց նախարարների անմիջարանությունից: Նշելով, որ այդ անմիջարանությունը մոզական զավազանի գորությամբ հանկարծակի չստեղծվեց, Մանանյանը գրում է, որ դա բարոյական, իրավական և դիմուսական որոշ զարգացման շրջանում և աշխարհագրական ու քաղաքական

<sup>24</sup> «Արարավ», 1902, № 1, լ. 74-75:

<sup>25</sup> Անդ, 1902, № 2, լ. 167-171:

որոշ պայմաններում անխոսափելի էր. «Տունասպանը՝ մեզանից ավելի քաղաքակառության հերթին, կործանվեց մասամբ է այն պատճառով, որ չկարողացավ լուծել ազգային քաղաքական միուրյան մեջ խնդիրը»<sup>26</sup>.

Պատրիարքիական այս ճիշդ մոդեցումը նկատի ունենալով է, որ «Մուրճ» ամսագրում դպրագրված գրախոսության անանուն հեղինակը պարմարաններին կոչ էր անուն հայոց պարմությունը շարադրն՝ հաշվի առնելով Մանանդյանի դեսակեփները<sup>27</sup>, հանգամանք, որ ինքը՝ Ն. Մանանդյանը, կարողացավ կապարել միայն դարիներ անց՝ 20-30-ական թվականներին, երբ արդեն դասախոսում էր Երևանի պետական համալսարանում և իրեն նվիրել էր Հայասպանի ներքին կյանքի պարմության հարցերի կապիտալ ուսումնասիրության խնդիրներին:

Ն. Մանանդյանի գործունեությունը Գևորգյան ճեմարանում պսակվեց նաև հայագիտական մի այլ մնայուն ձեռքբերումով: Նշանավոր հայագեցի Գ. Տեր-Մկրտչյանի հանձնարարությամբ Ն. Մանանդյանը և Դր. Աճառյանը սկսում են գրադպէլ XII-XIX դարերի հայկական վկայաբանությունների ուսումնասիրությամբ և շուրջով ընթերցողի սեղանին են դնում «Հայոց նոր վկաներ» երկիափոր ժողովրդական<sup>28</sup>, իսկ մնկ դարի անց՝ քննահամնապահական գիտական հրապարակությունը<sup>29</sup>: Ինչպես Աճառյանն է վկայում, գործը դանեց երկու դարի, որի ընթացքում գործընկերները թերթեցին Էջմիածնի գրապահոցի բոլոր 4000 ձեռագրերը<sup>30</sup> և սփեղծեցին 1155 թ. մինչև 1843 թ. հանուն հավաքի նահապակածների պարմությունը: Այս նահապակածները գրունելի սրբեր չէին, ուստի նրանց կենսագրությունը պաշփոնապես «Հայսմավորք»-ի մեջ չէր անցել, եկեղեցական օրացույցում էլ չէին հիշադրակիւմ: Այդ բացը լրացնելու միահոգությամբ է, որ Ն. Մանանդյանն ու Դր. Աճառյանը սրեղծեցին հայոց նոր վկաներին նվիրված աշխափություն՝ ձեռագրերի բաղդափությամբ, անհրաժեշտ ծանոթագրություններով և ցանկերով: Գրական քննադափությունը չափանց բարձր է գնահատել այս ժողովածուի հրապարակ գալը և մաքնանշել նրա կազմողների բարեխիղճ և շնորհակալ աշխափանը<sup>31</sup>:

Էջմիածնում եղած գրեթե բոլոր դարիներին Ն. Մանանդյանը հետևողականորեն զբաղվում էր նաև հունարան դպրոցի թարգմանությունների ուսումնասիրությամբ: Ինչպես հայրնի է, գրեթե զյուրից թիւ անց, Սահակ-Մեսրոպյան դպրոցի հեղինակները ձևուածուի

<sup>26</sup> «Արքագիր», 1902, № 2, լ. 9 171:

<sup>27</sup> «Մուրճ», 1902, № 4, լ. 9 231-235:

<sup>28</sup> Հայոց նոր վկաները (Ժողովրդական հրապարակություն), Վատարշապատ, 1902, հագ. Ա (1155-1485), 211 լ. հագ. Բ (1486-1843), 328 լ. 9:

<sup>29</sup> Հայոց նոր վկաները (1155-1843): Գիտական հրապարակություն՝ բազմաթիվ ձևուագրերի համապությամբ, ընդարձակ գիտական ժողովագրություններով ու ծանոթագրություններով, ձևագրերի, նահապակների, հագուկ անունների ու օպար բաների մաերածան ցուցակներով և ցանկերով, Վաղարշապատ, 1903, 800 լ. 9:

<sup>30</sup> Ի դեպ, ձեռագրերին ի մովա ծանոթանաբու տոյն հիանալի ասիթը Մանանդյանի հուշեց միմյանց բադակի Հակոբ Կարենյանցի հրապարակած ձևուագրացուցակի (1863) համարները ձեռագրերի նոր համարների հետ և կազմել ձեռագրերի հին և նոր համարների համապական դասակերպություն (պետք է համար Ա. Manandian, Die neuere Numerierung der in Karcencans Katalog verzeichneten Handschriften, ZAPh, 1903, Band 2, Heft 1, s. 29-40):

<sup>31</sup> Գ. Ենգիբարյան, գլւն «Լուս», 1904, № 3, մայիս-հունիս, լ. 9 222-223: «Մուրճ», 1904, № 5, լ. 9 147: A. Meillet, Revue critique d'histoire et de littérature, Paris, 1904, t. 58, p. 459-460 և այլն:

եղան հունարենից ասրբանական ու փիլիստիայական երկերի թարգմանությանը: Հայ մաքենազրության պարբռության մեջ այս բնագավառում կարարված աշխարհական բնորոշվում են հունարան դպրոցի թարգմանություններ անունով: Առաջին հայ թարգմանիչների ջանքերով է, որ իին հայերենով թարգմանվեցին Պրարտնի, Արիստոփրելի, Պորֆիրի և այլոց երկերն ու դրանց մեկնությունները: Զափազանց կարևորելով հունարան դպրոցի դերը հայ իին մաքենազրության և ընդհանրապես հայկական մշակույթի զարգացման գործում՝ Հ. Մանանյանը որոշում է գրադարձ նշված խնդրով:

Ընդհանրացնող բնույթի աշխարհական կարարելուց առաջ նաև մանրամասն ծանրագրում ու քարբազրում է Էջմիածնի մաքենահարաբանում գրինվող հունարան դպրոցի բոլոր երկերը: Այնուհետև դրանցից առանձնացնում է IV դարի եկեղեցական նշանակիր հայրերից հայրնի ասրբանական Գրիգոր Նազիանզացու ճառերի Նոննոսի (V դ.) մեկնությունները և Դավիթ Անհաղթին վերագրվող իմաստափառական երկերը պարունակող զըրշագրերը: Շուրջ երկամյա աշխարհամբների համրագումարն է Նոննոսին նվիրված զերմաներեն ուսումնասիրությունը<sup>32</sup>: Այսրեն Մանանյանը մանրամասն վերլուծել է Նազիանզացու իինց ճառերի Նոննոսի մեկնությունների իին հայերեն թարգմանության հանգամանքները և ցոյց տվել վերջինիս գրաված գենը հունարան դպրոցի համակարգում<sup>33</sup>:

Հունարան դպրոցին նվիրված հաջորդ աշխարհանքն իրեն երկար սպասեցնել չուվեց 1904 թ. «Արարագ»-ում լոյս փեսավ հայագեկի «Ուսումնասիրություն Դավիթ Նարքաց փիլիստիային վերագրված իմաստափառական երկերի» հետքազությունը<sup>34</sup>: Դավիթ Անհաղթի անձի, գործի, նրա ժառանգության անդրադարձը Մանանյանի համար սովոր երապուրանք չէր: Ընդհանրապես հայագիրության մեջ հսկակ պատկերացումներ չկային այլ բազմաթիվ Դավիթ Իմաստամբների վերաբերյալ, որ գործել էին V-VII դարերում Դավիթ Մելքոնիչ, Դավիթ Հայ, Դավիթ Արմենիոս, Դավիթ Նարքացի, Դավիթ Ներգինացի, Դավիթ Անհաղթ և այլ անունների ներքո: Մանանյանն իր առջև խնդիր է դնում հարթեցնել այլ կնճիռը և դարրորոշել Դավիթ Անհաղթին մյուս Դավիթներից: Նա առաջարկում էր վիճել խնդիրը լուծել ոչ թե իին մաքենազիրների վկայությունների քննության, այլ Դավիթ Անհաղթին վերագրված երկերի բովանդակության մանրազնին քննության միջոցով: Առաջնորդվելով այս ճիշդը մեկնակելով՝ Մանանյանը կարողացավ սահմանազարել Դավիթ Նարքացուն Դավիթ Մելքոնիչից կամ Անհաղթից և ապացուել, որ վերջինս սովորել է Ալեքսանդրիայում նշանավոր փիլիստիա Օլիմպիոդորոս Կրիստուք մոտ, և եղել նորավարունական: Այնուհետև Մանանյանը V-VII դարերում սպեհծված փիլիստիայական երկերից

<sup>32</sup> A. Manandian, Nonnos. Dic Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, գլն՝ ZAPh, 1902, Bd. I, Heft s. 220-272; Heft 4, s. 273-306. Նոյնը գլն նաև առանձին գրքով Marburg-Hessen, 1903, 81 ս.

<sup>33</sup> Հ. Մանանյանի սովոր ուսումնասիրության արժանիքների մասին մանրամասն գլն՝ «Լումա», 1903, № մայիս-հունիս, 1, թ 301-309; Ն. Ակինյան, «Հանդիսա ամսօրենայ», 1904, № 5, 1, թ 139-146, № 6, 1, թ 165-175; Ալոու, «Յուզագուման պրոմունակ», 1904, № 11, թ 321; H. Goussen, «Th. Recv.», Strasburg, 1903, p. 230 f.; Preuschen, «DL», 1904, p. 777 f.; I. Karst, «Or.Chist.», N.S.I, 1911, p.142-144; «Berlin. phil. Wochensher.», Berlin, 1904, № 9, s.264:

<sup>34</sup> Տն՝ «Արարագ», 1904, № 2, 1, թ 157-171; № 6, 1, թ 564-577; № 7-8, 1, թ 649-657: Նոյն թվականին սովոր ուսումնասիրությունը լոյս է գլնաւոր նաև առանձին գրքով, սակայն այլ խորագրի ներք՝ «Դավիթ Անհաղթ խնդիրը նոր լուսաբանությամբ: Մաքենազրական հսկագություն», Վաղարշապատ, 1904, 39 1, թ:

թարգմանություններից առանձնացրեց նորպլաֆոնական ուղղությանը հետքող ներքոնք-ված գրվածքները և ապացուցեց, որ հենց դրանք են պատկանում Դավիթ Անհաղթի գրչին՝

- ա. «Սահմանը իմաստափախրութեան»,
- բ. «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի»,
- գ. «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոփելի»:

Ներաքրքիր է նշել, որ 1902 թ. Էջմիածնի մագիստրադանում աշխափելու ժամանակ Հ. Մանանյանը հայդնաբերեց փիլիսոփայական մի անհայտ ու անանուն բնագիր, որ կրում էր «Մեկնութիւն Արորոգութեանցն Արիստոփելի» խորագիրը: XIII դարին պատրկանող սույն ծեռագիրը պակասավոր էր, բացակայում էին սկիզբն ու վերջին էջերը, նշված չէր հեղինակի անունը: Ներազա ուսումնասիրությունները փաստեցին, որ թեև գրչագիրը դպյալ աշխափությամ միակ պահպանված ընդորինակությունն է, սակայն հայդնի է դրա հունարեն ամբողջապես պահպանված բնագիրը: 1900 թ. Թեղինում Աղոփք Բուստեն հրապարակել էր այն, սակայն վերագրելով Էլիաս Խմաստաներին<sup>35</sup>: Նայերեն հայդնաբերված ձեռագիրը համեմատելով Արիստոփելի կադեզորիստների Ա. Բուստի հրապարակության հետ՝ Մանանյանը անմիջապես նկատեց դրանց նույնական լինելը և շնորհանալով բանասիրական մանրամասնությունների մեջ՝ այն վերագրեց Էլիասին<sup>36</sup>: Բուստի հետքությամբ էլ նա նորահայր բնագիրը հրապարակեց որպես Էլիասի հեղինակած երկը<sup>37</sup>:

Ռուսաբան դպրոցի առանձին հեղինակների ու շրջանների վերաբերյալ Մանանյանի այս հետքաբերքությունը հետքագայում ամփոփվեց ծավալուն մի մենագրության մեջ, որի մրածեղացման զաղափարն ու իրականացման ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերը կարարվեցին նրա գործունեության Էջմիածնական փարիներին<sup>38</sup>:

Հաջորդ աշխափանքը, որ այդ շրջանում դպյագրեց Հ. Մանանյանը, նվիրված էր Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ին<sup>39</sup>: Նայդնի է, որ Եվսեբիոսի սույն երկասիրության հունարեն բնագիրը կորել է, նրանից պահպանվել են միայն առանձին քաղվածքներ: Փոխա-

<sup>35</sup> Elias in Porphyri Isagogen et Aristoteli Categories commentaria, edidit Adolpus Bussc, Berolini, 1900.

<sup>36</sup> Միայն փարիներ անց պրոֆ. Ս. Ս. Արևշավյանը հմտավից ուսումնասիրությամբ ապացուցեց, որ սույն երկի վերաբրումը Էլիաս Խմաստաներին գորկ է որևէ հիմքից: Խնչվես հայկական, այնպես է հունական սկրոպ-նադրյութերը ցոյց ևս փափս, որ այս պարկասում է Դավիթ Անհաղթին (ընթանական Դավիթ Անհաղթ, Երկասիրությունը փիլիսոփայականը: Համահափառ բնական բնագրերը և առաջարանը Ս. Ս. Արևշավյանի, Երևան, 1980 և այլն):

<sup>37</sup> Մեկնութիւն Արորոգութեանցն Արիստոփելի, ընծայալ Էլիասի Խմաստափիրի: Ի լոյս Լած Հ. Մանանյան, Ս. Պետերբուրգ, 1911, VIII+177 լ.ք: Տե՛ս նաև սույն գրի գրախոսականները՝ Ն. Աղբայան, «Նոր հոսանք» ամսագիր, Թիֆլիս, 1913, № 3, մայիս, լ.ք 617-620; Ե. Ակինյան, «Հանդիս ամսօրենայ», 1913, № 4, լ.ք 246; Գ. Նահապելյան, «Բազմավեպ», 1913, № 2, լ.ք 92-95; Ա. Վարդակյան, «Հանդիս ամսօրենայ», 1912, № 11, լ.ք 684-686; A. Meillet, «Journal Asiatique», Paris, 1912, tome XX, p. 174-175.

<sup>38</sup> Հ. Մանանյան, Ռուսաբան դպրոցը և նրա գարգաման շրջանները, գլուխ «Հանդիս ամսօրենայ», 1925, 1926, 1927, 1928: Տե՛ս նաև առանձին գրքով՝ Վինեննա, 1928, 299 լ.ք:

<sup>39</sup> Հ. Մանանյան, Քաղվածքներ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից մի հին ծեռագրում, գլուխ «Հանդիս ամսօրենայ», 1905, № 1, լ.ք 15-19:

թենը հայրին են լատիներեն և հայերեն թարգմանությունները: Մանանդյանի պեղմամբ հայերեն թարգմանությունը (V դար) լիովին փոխարինում է հունարեն թագրին: Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ի գրաքար փեսպր հրապարակել է Մ. Ազգերյանը՝ լատիներեն թարգմանության և հունարեն թագրի պահպանված հարգածների հետ միասին<sup>40</sup>: Ահա այս հրապարակության միջոցով է, որ Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ը դառնում է գիրական հանրության սեփականությունը: Տպագրությունից որոշ ժամանակ անց հայրնաբերվում են Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ի հայերեն այլ ձեռագրեր ևս, մասնավորապես Էջմիածնի ձեռագրապահոցի թիվ 1775 ձեռագիրը<sup>41</sup>: Այն գրվել է 1217 թ.: Մանանդյանը մանրամասն ուսումնասիրել է հիշյալ ձեռագիրը, որը, բացի Եվսեբիոսից, պարունակում է նաև այլ թագրեր, մասնավորապես իրեն քաջածանոթ Նոննոսի մեկնությունը: Ահա այս ձեռագրի 117-ր-127-ր թերթերում են զերեղված քաղվածքներ Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ից: Այդ հարգածները խիստ եղակի են և, ինչպես հավասպում է Մանանդյանը, «արժեքավոր են այն գրեսակերպից, որ գաղափար են տպալու Էջմիածնի թիվ 1724 մայր ձեռագրի և Մ. Ավգերյանի լույս ընծայած թանգրի թերությունների մասին»<sup>42</sup>: Նորահայր քաղվածքները հավասար են Ազգերյանի հրապարակածի 250 լուղին, իսկ այդ 250 լուղում Մանանդյանը մարդաբանություն է 188 փարզնթեցում, որոնցից շաբթերը փաղագրվածից առավել նախընդրելի են:

Սա Մանանդյանի վերջին աշխարհությունն էր, որ լոյս էր փեսնում Գևորգյան ճեմարանում պաշտոնավարելու ընթացքում: Շուրով, 1905 թ. ամռանը, նա հրաժեշտ է դպալի ճեմարանին, իր սաներին, գործնկերներին, Մայր Աթոռին և ընդունեկան հանգամանքների բերումով դիմավորությունները, և որոնք անմիջապես դեղ գրադեցրեցին հայագիրության ոսկե ֆոնդում: Ուր է որ եղավ՝ Թիֆլիս, Դորպար, Բաքու, Շյուսիսային Կովկաս, միշտ է ճեմարանը մնաց անհասանելի մի երազանք: Սակայն 1911 թ. անսպասելի և հիանալի առիթ եղավ վերադառնալու Գևորգյան ճեմարան: Նա հրավեր սրացավ գրադեցնելու ճեմարանի դիմումի թափուր պաշտոնը<sup>43</sup>: Սակայն անմիջապես է սրբաված դրամարկել այդքան հրապուրիչ առաջարկից, քանզի, ինչպես խոսքովանում է անձնական նոթերից մեկում «հացի խնդրի պատճառով է, որ հարկադրված գործում է իր հակումներին հակառակ»<sup>44</sup>: Նույն շրջանում գրված մի այլ նամակում դարձյալ խոսրովանում է: «Երկար դարիների ընթացքում ես հարուկ պատրաստվեցի գիրական գործունեություն»:

<sup>40</sup> Եւսեբի Պամփիլյայ Կնարացոյ Ժամանականը, Վենետիկ, 1818:

<sup>41</sup> Այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մագլենադարակի թիվ 1904 գրագիրը:

<sup>42</sup> Տ. Մանանդյան, Քաղվածքներ..., էջ 15:

<sup>43</sup> ՄԱԲ, Թղթ. 227, վագ. 319դ, թ. 8ա:

<sup>44</sup> Տե՛ս Պ. Դ. Շովիանիսիայան, Հակոբ Մանանդյան, էջ 11:

յան, և ինձ ավելի քան ցավայի է, որ սրբազնած եմ հրաժարվել զիտական աշխատանքի մասին ունեցած երազանքից»<sup>45</sup>:



Դ. Մանանյանի հակումներն ամրողությամբ ու անմնացորդ դրսնորվեցին խորհրդային իշխանության տարիներին: 1920 թ. նա նշանակվում է Հայաստանի համալսարանի պարբռագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակադրար, 1921 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր, այնուհետև նշանակվում պարբռության ֆակուլտետի դեկան, իսկ ժողովրդի պարբռության ամբիոնի վարիչ, նույն ամբիոնի պրոֆեսոր: 1939 թ. ընդունվել է ԽՍՇԾ ԳԱ իսկական անդամ, 1943 թ. հասքափել ԽԽՍՇ ԳԱ իսկական անդամների առաջին կազմում:

Այդ նույն թվականներին է, որ լոյս են գրեսնում հայ ժողովրդի պարբռության հիմնահարցերին նվիրված նրա 100-ից ավելի հիմնարար աշխատությունները, որոնցից կարելի է առանձնացնել «Օ տօրգու և գործաք Արմենի» (ոուս.՝ 1930, 1954, անգլ.՝ 1965), «Ֆենդայիզմը Հին Հայաստանում» (1934), «Հին Հայաստանի զիխավոր ճանապարհները» (1936), «Տիգրան Բ և Հռոմը» (հայ.՝ 1940, 1972, ոուս.՝ 1943, ֆր.՝ 1963), «Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում» (1940), «Մեսրոպ Մաշտոց» (1940), «Զննական գրեսություն հայ ժողովրդի պարբռության» (հայր. Ա-Գ, 1945, 1952, 1957, 1960) և այլն:

Անկասկած, Դ. Մանանյան-հայագետի զիտական վասքակի անբեկանելի կշռույթը հենվում է XX դարակզբին Գևորգյան ճեմարանում և նրա շուրջը սրբնության գիտական հզոր հիմնարարի վրա, որն իր վրա է կրում նաև ճեմարանական այլ նվիրյալների զիտական ժառանգության ողջ ծանրությունը: